

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

հարկադիր կատարողի որոշումը փոփոխելու մասին

« 12 » ապրիլի 2022թ.

ք. Արտաշատ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի պետ արդարադատության գնդապետ՝ Լ. Դանիելյան, ուսումնասիրելով 16.03.2022թ.-ին վերսկսված թիվ 0693889: կատարողական վարույթի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի կողմից 02.11.2021թ.-ին տրված թիվ ԱՎԴ4/0871/02/20 կատարողական թերթի համաձայն պետք է պարտապալիսաժակ երվանդի Հախվերդյանից հոգուտ «Պրեմիում Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի բռնագանձել 2.344.490 ՀՀ դրամ և տոկոսներ: Գումարի բռնագանձումը տարածել վարկային պարտավորությունների կատարման ապահովման նպատակով գրավադրված և պատասխանող Խաժակ Երվանդի Հախվերդյանի սեփականության իրավունքով պատկանող՝ HYUNDAI ELANTRA 1.6 մակնիշի, 05 VV 006 պետհամարանիշով 2012թ. թողարկման, նույնականացման համարը՝ KMHDH41CBDU725417 ավտոմեքենայի վրա:

16.03.2022թ.-ին հարկադիր կատարողի կողմից կայացվել է «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշումը: Որոշման ուսումնասիրությամբ պարզվել է, որ տեղ է ունեցել վրիպակ, հարկադիր էլեկտրոնային աճուրդի ներկայացված HYUNDAI ELANTRA 1.6 մակնիշի, 05 VV 006 պետհամարանիշով ավտոմեքենայի գնահատման գինը 3.300.000 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 3.900.000 ՀՀ դրամ:

Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի, Վայոց Ձորի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող արդարադատության ավագ լեյտենանտ Վ. Խաչատրյանի վարույթում գտնվող թիվ 06938893 կատարողական վարույթով 16.03.2022թ.-ին կայացված որոշումը անհրաժեշտ է վերադատության կարգով փոփոխել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1 հոդվածի 6-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Փոփոխել՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արարատի և Վայոց Ձորի մարզային բաժնի, Վայոց Ձորի տարածաշրջանի բաժանմունքի հարկադիր կատարող, արդարադատության ավագ լեյտենանտ Վ. Խաչատրյանի «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» 16.03.2022թ.-ին կայացված որոշումը և որոշեցի հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը նշանակել 25.04.2022թ.-ը:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:



**ԲԱԺՆԻ ՊԵՏ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ**

Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ